ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ անվանի գրականագետ, հրապարակախոս, արվեստաբան և նկարիչ Ստեփան Թոփչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ.8 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ անվանի գրականագետ, հրապարակախոս, արվեստաբան և նկարիչ Ստեփան Թոփչյանը ծնվել է 1937թ. հունիսի 20-ին, Երևանում: Եղել է գրականագետ Էդուարդ Թոփչյանի որդին, գրող Ալեքսանդր Թոփչյանի եղբայրը: 1959թ. ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1959թ. աշխատել է Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունում, 1960-1966թթ.՝ ՀՀ ԳԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1967-1976թթ. եղել է ՀՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի էսթետիկայի, ապա հայ փիլիսոփայության պատմության բաժնի ավագ գիտաշխատող, 1976-1979թթ.՝ Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրի տեղակալ, 1979-1994թթ՝ «Նաիրի» հրատարակչության գեղարվեստական արձակի խմբագրության բաժնի վարիչը: 1966թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1967թ.-ից եղել է Հայաստանի գրողների միության անդամ: 1994թ.-ից ապրել է Լոս Անջելեսում: Ուսումնասիրությունները նվիրված են հայ նոր գրականության և գեղագիտական մտքի պատմության խնդիրներին: Հրատարակվել են նրա «Շիրվանգադեի էսթետիկան» (1963թ.), «Ռաֆֆու էսթետիկական հայացքները» (1971թ.), «Արևմտահայ նեոռոմանտիզմի էսթետիկայի ուրվագիծ» («Հայ էսթետիկական մտքի պատմությունից, 1 գիրք, 1974թ.) աշխատությունները: Հեղինակել է «Հայ նոր գրականության պատմություն» (հատոր 5, 1979թ.), «Հայ քննադատության պատմություն» (հատոր 1-2, 1985թ., 1998թ.) բազմահատորյակների որոշ գլուխների և այլն: Ռուսերեն լույս է տեսել նրա «Հայաստանում էսթետիկական մտքի զարգացմն ակնարկ» (համահեղինակ, 1976թ.) գիրքը:

Ստեփան Թոփչյանը մահացել է 2021թ. հունվարի 19-ին Լոս Անջելեսում, հուղարկավորված է Երևանում:

Հայ անվանի գրականագետ, հրապարակախոս, արվեստաբան և նկարիչ Ստեփան Թոփչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոց հ.8 հասցեում

փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի կողմից: Հուշատախտակի պատրաստման և տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է Ստեփան Թոփչյանի որդիների՝ Արամ և Էդվարդ Թոփչյանների կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ստեփան Թոփչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ստեփան Թոփչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ